

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանի շնորհավորանքի խոսքը Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ

Հարգելի հայրենակիցներ

Մեր երեխաների կյանքի պաշտպանության ու երջանկության համար մենք պետք է անենք առավելագույնը՝ նրանց խաղաղ, անվտանգ ու բարեկեցիկ հայրենիք թողնելու համար, քանզի մեր մատաղ սերնդի մեջ ամփոփված է ոչ միայն կյանքի շարունակությունը, այլ նաեւ՝ մեր հայրենիքի լուսաշող, գեղեցիկ ապագան: Նվիրենք մեր ամեն մի օրն ու ժամը հանուն մեր երեխաների առողջ, ստեղծարար ու պաշտպանված ապրելակերպի:

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ, ցանկանում մանկական ու պատանեկան անհոգ տարիներ, խաղաղ ու արարչագործ հայրենիք, ծնողական անսպառ սեր ու գուրգուրանք, միշտ պայծառ տրամադրություն:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյան

Մայիս-Հասմիկ

Մայիսի 6-ին „Զվարթնոց վերածննդի,, փառատոնի մրցանակակիրները

Մայիսի 11-ին Ծովագարդ մայիսի 9

Մայիսի 18-ին Արծվանիստ դասասենյակի անվանակոչություն

Մայիսի 23-ին հրաժեշտ Ռաֆիկին

Մայիսի 25-ին մարզպետի նշանակում

Մայիսի 26-ին վերջին զանգ